ԱՐՇԱԿ ՄԱՂՈՅԵԱՆ

ԳԷՈՐԳ Վ.Դ. ՉՈՐԷՔՉԵԱՆԻ ՔԱՐՈԶԳԻՐՔԸ

Եկեղեցու կեանքում կարեւորագոյն տեղ ունի քարոզխօսութիւնը, եւ հոգեւորականի, Եկեղեցու սպասաւորի, հեղինակութիւնը մեծապէս կախուած է նրա քարոզների որակից: Քահանան կոչուած է առաջնորդելու իր հօտը, ուղղորդելու մարդկանց գործողութիւնները հանրային ասպարէզում, միտիթարելու ծանր կացութեան մէջ յայտնուած հաւատացեալին:

Բաւական երկար ժամանակ հովուելով Նոր Նախիջեւանում՝ Գէորգ վ. Չորէքչեանը իր համաքաղաքացիների շրջանում վաստակել էր մեծ հեղինակութիւն ոչ միայն եկեղեցական-կրթական, մշակութային արդիւնաւէտ գործունէութեամբ, այլեւ խորիմաստ ու տպաւորիչ, ազդու քարոզներով, որովհետեւ ինչպէս ինքն էր ասում՝ «Հոգեւորականի պարտքն ու կոչումն է կեանքում ճշմարտութիւն որոնողին խորհրդատու, բարեկամ եւ ուղեցոյց լինել»[1]: Այս ելակէտից Նոր Նախիջեւանի առաջնորդական փոխանորդը քարոզել է հաւատացեալ ժողովրդին, նպատակը՝ «որ աւետարանական ճշմարտութիւններ որոնողները, ինչպէս նաեւ կեանքում յուսահատեալները միտիթարութիւն եւ նեցուկ գտնեն այնտեղ»:

1913-1916 թթ. կարդացած այս քարոզները հասկանալի ու սրտամօտ են եղել ունկնդրին, համոզչութիւնն է եղել յաջողութեան գրաւականը: Եւ Հայր Գէորգի լծակից ընկերները ցանկացել են տպագրուած տեսնել դրանք, համոզուած, որ գիրքն իբրեւ ուղեցոյց ունենալով ձեռքի տակ՝ իրենք եւս կկարողանան աւետարանական խօսքն ու խրատը մատչելի ձեւի մէջ մատուցել հաւատացեալներին:

Գրքի հրատարակութիւնը հնարաւոր դարձաւ փոքր-ինչ աւելի ուշ, նախաձեռնութեամբ Գէորգ Ե. Կաթողիկոսի, «որ միշտ գերադաս է համարել աւետարանական կենդանի խօսքը մեռած ծէսերից ու արարողութիւններից» (Գ): Այս հանգամանքով ընդգծում են քարոզի կարեւորութիւնը եւ քարոզչի պատասխանատու վերաբերմունքը. որակեալ քարոզը եկեղեցական արարողութեան երկրորդական տարրը չէ, այլ, ընդհակառակն, առաւել ազդեցիկ, նպատակային մի մասն է:

Քարոզները գրքում դասաւորուած են ըստ տօների հերթականութեան եւ նուիրուած են տուեալ տօնի խորհրդին, անպայման ժամանակի հրատապ խնդիրների բացայայտումով: Դրանցից առաջին երկուսը («Մեր նշանաբանը», կարդացած 1915 թ. եւ «Յոյս»՝ 1916-ին) վերաբերում են Ամանորին:

1915-ի Նոր տարուայ գիշերը, ասում է քարոզիչ Հայրը, սովորական ուրախ հնչերանգից զուրկ էր, խորհրդաւոր էր ու տխուր: Առաջին աշխարհամարտի աւերածութիւններն ու մարդկային վարքի բիրտ դրսեւորումները ամեն օր ռազամադաշտից բերում էին սահմռկեցուցիչ լուրեր, եւ այդ թոհուբոհի մէջ ամենից աւելի ծանր էր հայրենի ժողովրդի կացութիւնը.

1 «Քարոզգիրք», Կազմեց Գէորգ եպիսկոպոս, Ս. Էջմիածին, 1917:

«մեծ տէրութիւնների» պահած վարագոյրի ետեւում թուրք ազգայնականութիւնը իր համար հայրենիք էր ստեղծում կարմիր նախճիրի ու սպիտակ ջարդի նպատակային եւ հապշտապ կիրառումով: Աչքի առաջ ունենալով այս հանգամանքը, քարոզիչը հարեւանցի ուրուագծում է հայ ժողովրդի յատկապէս ուշ-միջնադարեան պատմութեան ծանր դրուագները՝ նմանեցնելով իրեն ժամանակակից անցքերին: «...Անցեալ տարի,- ասում է նա,- հազիւ սկսեցինք խաղաղ քուլթուռական աշխատանք դպրոցական գործունէութեան շրջանում, որ մեր երկրին եւ մեր շրջապատին միայն բարիք կարող էր բերել՝ եւ ահա տաճկական կատաղի հրոսակախմբերը եկան հայ ժողովրդին տնտեսապէս քայքայելու, նրա արիւնը խմելու եւ՝ եթէ հնար լինի, աշխարհի երեսից հայի անունը իսպառ ջնջելու ծրագրով» (6):

Այս պարագային ի՞նչ նշանաբան պիտի ունենանք մենք,- հարցնում է հեղինակը եւ պատասխանում,- մեր նշանաբանը պիտի լինի «**մաքառող** Յիսուս, որ մարդկային սրտի սրբութիւնը անարգող դպիրներին ու իշխաններին խարազանեց: **Վեհանձն** ու **արհամարհող** Յիսուս, որի մի հայեացքը սպանեց ճշմարտութիւնը հեգնող Պիղատոսին եւ սարսուռ բերաւ նրա վրայ ու ստիպեց բացագանչել՝ «քաւեալ եմ յարենէ արդարոյն» (Մատթ. ԻԷ. 24):

Վերջապէս, հանապազ աշխատող եւ տքնող Յիսուս, «որի անհանգստութիւնը ուրիշների հոգու հանգստութիւնն էր, որի խօսքն ու գործը՝ շրջապատի փրկութիւնն էր» (9): Քարոզը եզրափակում է հաւատով, որ «երբ մեր նշանաբանը լինի մաքառող, վեհանձն ու միշտ աշխատող եւ տքնող Յիսուս՝ ...մեր արեւի շողը կպատռէ մեր ճամբի մշուշը, եւ մենք կտեսնենք վերեւում՝ կապուտակ երկինք, մեր առաջը՝ կանաչ դաշտ. մեր հոգին կ'հրճուի, մեր քայլերը հաստատ ու արագ կընթանան եւ կառաջնորդեն մեզ մեր տենչերի նաւահանգիստը»:

Ամանորեան քարոզը կարծես սրա շարունակութիւնն է, որ բնաբան ունի Եսայի Խ. 4: Հայ իրականութիւնը տխուր խորհրդածութիւններ է թելադրում. ժողովուրդը միամտօրէն հաւատացել է քաղաքակիրթ Եւրոպայի արդարամտութեանը եւ հիասթափուել: «Մարդասէր ձեւացող այդ եսասէր Եւրոպան դիւանագիտական նաւին ապաւինած ու աչքերն անձնական շահի փարոսին ուղղած՝ մեզ յետ մղեց ու մեր դահիճների գիրկը նետեց, անտարբեր դիտելով, թէ ինչպէս ենք խեղդւում արեան ու արտասուքի յորձանքի մէջ» (11-12): Սրան յաջորդում է ճարտասանական հարցը՝ առաջին անգա՞մն է, «որ քարսիրտ մարդիկ փշէ պսակ են դնում հայ նահատակ ժողովրդի գլխին»: Մինչդեռ Նա, որ դաշտում ցրուած չոր ոսկորներին կենդանութիւն տուեց, հնչեցնում է իր մխիթարիչ ձայնը, «Նա այսօր էլ Մասիսի գլխին կանգնած եւ իւր բազուկները տարածած պահպանում է հայ երկիրը, օրհնում հայ ազգը եւ պատրաստ է իւր շունչը փչել ու նահատակ հայ ժողովրդի չոր ոսկորներին կենդանութիւն շնորհել՝ եթէ նա ականջ դնէ Փրկչի յուսատու եւ մխիթարիչ ձայնին ու հաւատով ներշնչուած՝ անդուլ աշխատէ» (12): Ուրմեն, անհրաժեշտ է, ինչպէս Խրիմեան Հայրիկն էր ասում, աշխատել համառ ու անվկանդ:

Եւ Չորէքչեանը «ռուսահայ եղբայրներին» յիշեցնում է այն պատասխանատուութիւնը, որ ծառացած է ազգի առջեւ. անհրաժեշտ է համախմբել ոյժերը, ձեռք պարզել միմեանց եւ անդադրում աշխատել, «վերածնելու՝ ինչ որ կորցրել ենք, վերաշինելու՝ ինչ որ աւերել են: Ամօթ եւ նախատինք կլինի մեզ,- ասում է քարոզիչը,- եթէ մեր տաճկահայ եղբայրների հոգեվարքին ականատես լինենք եւ չզգանք որ նրա արեան հետ մեր իսկ արիւնն է կաթիլ կա-

թիլ ծորում» (13): Եւ պէտք չէ «աշխարհի մեծերի մօտ հանգիստ ու փառք» որոնել, պէտք է ապաւինել սեփական ոյժերին «ի ներքուստ զօրանալ, հոգով եւ իմաստութեամբ զարգանալ եւ հաւատալ, որ այդ շնորհաց լուսով առկայծող պատրոյգը երբեք չի շիջանի» (անդ): Անհրաժեշտ է, ուրեմն, հաւատալ ազգային գոյութեան շարունակականութեանը եւ «յուսով ու հաւատով զօրացած»՝ եղբայրութեան ձեռք մեկնել աղետեալ հայրենակիցներին:

Յաջորդ՝ ծննդեան տօների առթիւ արտասանած երկու քարոզների մէջ նոյն մտահոգութիւններն ու նոյն յորդորներն ենք տեսնում, որ նաեւ ժամանակի հայ կեանքի պահանջն ու թելադրանքն է: Դարդանք 1915 թ. «Խաղաղութեան աւետիքն ու արդի կեանքը» քարոզի վերջընթեր պարբերութիւնը. «Եկէք, եղբայրնե՛ր ու քոյրեր, միանանք եւ միասին հնչեցնենք մեր ձայնը. անհատի ձայնը մարում է խռովարար եւ աղմկայոյզ աշխարհի մէջ. խաղաղութիւն սիրող բոլոր սրտերից պէտք է խաղաղութեան աղօթք վերառաքել Բարձրեալին...Սակայն աղօթքը միայն բաւական չէ. նա արտաքին օգնութիւն է. պէտք է նաեւ ներքին աշխատանք: Եկէ՛ք ուրեմն, եղբայրներ, զօրացնենք մեր կամքը եւ աշխատենք, որ Յիսուս ծնուի ոչ միայն մեզ համար, այլ մեր մէջ, որ մեր սրտերը մսուրք դառնան, ուր ծնուի աստուածային կեանք, եւ նորածին կեանքը իւր սիրոյ ջերմութեամբ հալեցնէ սրտերի եսականութեան սառոյցը» (24):

1914 թ. կարդացուած «Անցեալն ու ներկան» քարոզը նուիրուած է Վարդանանց տօնին: Նահատակների հայրենասիրութեան դրուատումից յետոյ հեղինակն անցնում է իր ժամանակին ու ժամանակակիցներին, նկատելով, թէ նահատակ է հայ դպրոցը, նահատակ է հայ ընտանիքը, որ հեռանում են ազգային աւանդութիւններից ու սովորոյթներից, առանց որոնց անկարող է ապրել որեւէ ազգ, մանաւանդ՝ փոքրաթիւ:

Սա ամբողջապէս կապել օտար իշխանութիւնների ձուլման քաղաքականութեան հետ՝ կնշանակէր չքմեղանալ, աչք փակել սեփական անտարբերութեան ու անհոգութեան, անհոգի վերաբերմունքի հանդէպ: Առաջինի մասին բարձրաձայնելն անիմաստ հանդգնութիւն էր տրեալ պարագային, եւ քննադատութեան սլաքն ուղղում է ազգի ներքին՝ հոգեմտաւոր կեանքին: Մտահոգիչ այս վիճակը միայն Նոր Նախիջեւանին կամ ռուսաստանեան միւս գաղութներին չէր վերաբերում անշուշտ: Այդպիսի պայմաններում կորչում է ազգային դէմքը, ինքնութիւնը, նահատակւում է ազգը:

«Մի՞թէ նահատակ չես դու, հայ անուշիկ լեզու,- ասում է հայր սուրբը,- շատ ընտանիքներից հալածուած ու վտարուած մայրենի բարբառ...Մէկին ատելի ես, որովհետեւ անիծեալ մամռնայ ձեռք բերելու չես նպաստում, միւսին, որովհետեւ տարփածուի լեզուն այլ է, երրորդին՝ որովհետեւ մեղկ է եւ ծոյլ» (35): Ծուլութեան ու անտարբերութեան պատճառով աստիճանաբար կորչում է ազգային ինքնագիտակցութիւնը, կորչում է անձնուիրութեան ոգին, «քանի որ յարմարութիւնների գերի, ոսկու սպասաւոր արդի հայը իւր բոլոր խաւերով՝ փախչում է հայ գրականութիւնից եւ հայ դպրոցից՝ հայ ոգու երկու ջերմոցներից...Հայ դպրոցը յաճախում է միայն հայ աղքատը, այն էլ աղքատութիւնից ստիպուած» (35):

Մինչդեռ կեանքի ու մանաւանդ փառքի ուղին բոլորովին այլ է, եւ քարոզիչը կոչ է անում. «Եկէ՛ք, եղբայրներ, գլուխ խոնարհենք մեր նախնեաց հերոս սրտի եւ անձնուէր ոգու առաջ, թող նոցա հոգիները բարեխօս լինեն Բարձրեալի առաջ զօրացնելու մեր կամքը՝ դէ-

պի ազնիւը, դէպի վեհը, դէպի յաւիտենականը» (36)։ Նկատենք, որ հայ եկեղեցական մատենագրութեան մէջ, բացառիկ երեւոյթ էր նահապակների բարեխօսութիւնը։ Վարդանանց տօնին նուիրուած այս եւ միւս՝ «Մարդկային հոգու ելեւէջներ» (1916 թ.) քարոզը, նուիրուած են հայապահպանութեան խնդրին, պահանջում են հաւատարիմ մնալ մեր պապերի ուխտին, կրօնին ու եկեղեցուն, չբաւարարուել այդքանով, «եւ եթէ հարկ լինի՝ նահատակուել» (38)։

Հայրենի արժէքներից հեռանալը նորանոր նահանջների, աղէտների հետեւանք ու պատճառ է միաժամանակ։ Գէորգ Չորէքչեանը իր քարոզների մէջ պեղում է մարդկային հոգին, թափանցում նրա գաղտնարանները, ցոյց տալիս մանր կրքերի, ծուլութեան եւ միւս արատների պատճառած վնասները եւ սթափութեան կոչ է անում ունկնդիրներին՝ ապաշխարող եղբայրներին ու քոյրերին՝ զարթնել թմրութիւնից, լծուել ստեղծագործ աշխատանքի, սրտերն ու զգացմունքներն ուղղել դէպի Արարիչը, «Որովհետեւ աշխատանքն ու Աստուծոյ կամքի հպատակութիւնն է միայն աշխարհի եւ մարդու կատարելութեան ճանապարհը» (46)։ Քարոզների համար, ուրեմն, հանկերգի հանգամանք ունի աւանդապահութեան, անդուլ աշխատելու, նուիրումով գործելու կոչը. գործն է, որ գնահատելի է մարդու մէջ։ Եւ ամեն մարդ ինքն իր խղճի առաջ մշտապէս հաշուետու պիտի լինի արածի ու չարածի համար։

Ժամանակ առ ժամանակ Չորէքչեանն անդրադարձել է առաջին աշխարհամարտի ծանր պատկերներին եւ իր մտահոգութիւններին ու վշտին հաղորդակից դարձրել ունկնդրին, հաւատ ներշնչել նրան, որ վաղ թէ ուշ կուղղուեն մարդկային ձեռքի ձախորդ գործերը։ 1915 թ. ապրիլ 30-ի քարոզը տալիս է այս խօսքի լաւագոյն ապացոյցներից մէկը։ «Աշխարհ թնդաց Վասպուրականի աւերի, կրակի, կոտորածի գոյժից,- արձանագրում է նա,- Վանի գեղեցիկ այգեստանները մոխիր դարձան, շրջակայ գիւղերը գետնին հաւասարեցան, խեղճ կանայք եւ երեխայք կրակի մէջ խորովեցան, երիտասարդների արեամբ երկիրը յագեցաւ, եւ արիւնը լճացաւ։ Այդ վայրերում ծաղիկներ կբուսնեն, որոնք կբողոքեն Արարչին՝ կատարուած անարդարութեան դէմ... Այդ երկիրը անէծքի վայր կդառնայ օտարի համար, նա մե՛զ է պատկանում եւ մե՛զ էլ կպատկանի, եթէ մենք մեր անձնուիրութեամբ եւ աշխատանքով մեր պապերի ժառանգութիւնը պաշտպանենք» (112)։ Նրա անսասան հաւատը փոխանցում է ունկնդիր հաւատացեալին՝ նպաստելով ըմբռնելու հայի ճակատագիրը, սիրելով մեր հայրենիքը, ազգակիցներին, ամեն օր մտածելով ու պայքարելով՝ կհասնենք բաղձալի ափ, ուր «հայի երկիրն էլ հայի երկնքի հետ մի ներդաշնակ միութիւն կազմէ եւ դառնայ մշտական խաղաղութեան ու երջանկութեան վայր. ամէն» (անդ։)

Բայց աշխարհն աւելի ու աւելի հակադրւում է բնութեանը, հեռանում է բնութիւնից, բնականութիւնից, կորցնում դէմքն ու բարոյական արժէքները, որոնց կարիքն անհամեմատ աւելի է, քան, ասենք, գիտութեանը, որ յամենայն դէպս առնուազն վերջին հարիւրամեակում, կամայ թէ ակամայ, աւելի շատ ծառայել է սպանութեան, զէնքի տեսակներ է հնարել, դառնացնելով մարդկութեան կեանքը։ «Սուրը եւ եսականութիւնը իշխում են բոլորիս հոգուն. ո՞վ պիտի հաստատէ մեր սրտում ճշմարտութեան ու հանրային շահի գաղափարները, ո՞վ պիտի վառէ մեր սրտում սիրոյ հանգած կրակը դէպի մարդը... Ազգերի ազատութիւնը

փառաբանում է գրքերի մէջ եւ դիւանագէտների բերանում, բայց ո՞վ է պաշտպանողը տեղն եկած ժամանակ. ո՛չ ոք: Ինչո՞ւ. որովհետեւ այս կամ այն պետութեան շահը թոյլ չի տալիս» (99): Մարդկութիւնն առհասարակ մեծամեծ կորուստներ է արձանագրել բարոյական ճակատում, եւ այսօր, ասում է Չորէքչեանը, «մենք աշխարհի թագաւորներից շատ աւելի ենք վախենում, քան երկնաւորից, որովհետեւ սոցա տեսնում ենք, իսկ Նրան՝ ոչ» (100):

Այս կարգի դիտարկումներն այսօր արդէն հասարակ տեղի են դարձել, այս խօսքերն ապացուցման կարիք չունեն, որովհետեւ գոնէ նոր ժամանակների պատմութեանը քիչ թէ շատ ծանօթ մարդիկ գիտեն հազարաւոր օրինակներ: Մարդիկ մոռացել են, որ «երկիրը զուարճութեան վայր չէ, որ միայն հաճոյքով անցընենք մեր օրերը, եւ ոչ էլ անապատ, որ յուսահատութեան գերի դառնանք եւ մահուան գիրկը նետուենք, այլ աշխատավայր, ուր սերմեր պիտի ցանենք ապագայ ուրախ հունձի համար» (116): Ուստի դարձեալ անհրաժեշտ է աշխատել, հաւատալ, որ իզուր չեն այդ ջանքերը:

Քարոզների բուն էութիւնը հայրենասիրական ելակէտն է, որից անբաժան է եւ սէրը դէպի Հայ Առաքելական Եկեղեցին: Բայց կանխազգալով, որ կարող են մարդիկ մտածել, թէ չափից աւելի է հեռանում «համամարդկայինից», յաճախ է խօսում հայրենասիրութիւնից՝ Չորէքչեանը յատուկ անդրադարձով հիմնաւորում է եւ այդ պարագան: 1914 թ. յունիս 8-ին, Ս. Էջմիածնի տօնի առթիւ արտասանած քարոզը հէնց նուիրուած է Հայրենիքի գաղափարին: Նա նկատում է, որ հայրենասիրութիւնը խորթ չէ անգամ «Փրկչի՝ համամարդկային սիրով լցուած» սրտին. «Նա որ գիտէր՝ թէ աշխարհի Փրկիչ է, թէ իւր Աւետարանը բոլոր ազգերին պիտի քարոզուի, այնուամենայնիւ քանի որ ապրեց երկրի վերայ՝ հայրենի երկրի սահմաններից չելաւ, եւ քանանացի կնոջը պատասխանեց թէ՝ Ուղարկուած եմ Իսրայէլի տան կորուսեալ ոչխարների համար. որովհետեւ Իսրայէլի ժողովրդի ծնունդ էր, նրան էր պատկանում իւր կեանքը. այդ ժողովրդի համար մաշուեցաւ, նրան զոհուեցաւ» (131: Մմմտ. Մատթ. ԺԵ 24): Բնականաբար Չորէքչեանն ինքը հայրենիքի ու հայրենասիրութեան մասին պիտի խօսէր ու պատգամէր իր համաքաղաքացիներին, մի հանրութեան, «որ հայրենի հողից կտրուած, օտար երկնքի տակ, օտար հողի եւ ջրի ապաւինած՝ ծուարել է հայրենիքի կարօտը սրտում» (անդ:) Հայրենիքն այն գաղափարն է, որ «մեր ազգի բոլոր անհատներին եւ բազմատեսակ տոհմերին միացրել է՝ դարձնելով նոցա մի ժողովուրդ՝ մի բազմանդամ ընտանիք, որոնց երակներում միեւնոյն արիւնն է հոսում, որոնց բերնում միեւնոյն մայրենի բարբառն է հնչում եւ որոնց՝ ո՛չ կարիքը եւ ո՛չ վտանգը կարող է բաժանել»[2] (132):

Այստեղ եւս պատշաճ տեղ ունի պատմութեան դժուարին ճանապարհներին բազում կորուստներ կրած հայութեան անսասան մնացած միակ կառոյցը՝ Եկեղեցին: «Իւրաքանչիւր ազգ պէտք է մի կենտրոն, մի սրբավայր ունենայ, ուր ուղղել կարենայ իւր աչքերը իբր ամբողջութիւն,- գրում էր Չորէքչեանը:- Այդ կենտրոնն ու սրբավայրը հայ ժողովրդի համար Ս. Էջմիածինն է, Հայաստանեայց Եկեղեցու ծագման ու հաստատութեան որբանը» (135): Մեծ է Հայ Եկեղեցու դերը մանաւանդ այն գաղթավայրերում (Ռումինիա, Աւստրիա եւն), ուր հայորդիները կորցրել են մայրենի լեզուն, սակայն իրենց համարում են Հայ Առաքելական

2 Հայրենասիրութեան գաղափարին տարիներ անց Չորէքչեանն անդրադարձել է Թիֆլիսի Քամոյեան եկեղեցում խօսած քարոզում (15 փետրուար 1925 թ.):

Եկեղեցու զաւակներ: Նրանց միաւորողը Հայոց Հայրապետական Աթոռն է, որ «աստուածային պարգեւ է մեզ համար, դարերի պատմութեամբ սրբագործուած եւ իսոր արմատներ ձգած հայ ժողովրդի կեանքի մէջ: Ջլատել նրա բարոյական ոյժն ու հեղինակութիւնը, սառնութիւն քարոզել նրա դէմ եւ ժողովրդին մոլորեցնել՝ երեխայական անմտութիւն է եւ ազգավնաս գործողութիւն: Մենք յոյս ունենք, որ այս ժամանակաւոր մոլորութիւնները կչքանան, ինչպէս առաւօտեան մէգը արեւի ճառագայթների առաջ՝ եւ ներկայ հայը՝ իւր պապերի նման՝ կաղօթէ «Միշտ անշարժ պահեա՛ զաթոռ Հայկազնեայց: Ամէն»[3] (135):

Համապատասխանաբար հայր սուրբն անդրադարձ է կատարում Մայր Աթոռի Գահակալի նշանակութեանը. մանաւանդ պետական կառոյցների չգոյութեան պարագային առաւել կարեւորւում է այն: «Հայոց Հայրապետն է հայ ժողովրդի ամբողջութեան ներկայացուցիչը օրէնքի առաջ, մեզ վերայ իշխող պետութիւնների աչքում. նա՛ միայն կարող է իւր ամբողջ հօտի ցաւերի եւ կարիքների թարգմանը հանդիսանալ եւ նորա դարաւոր իրաւունքների եւ արտօնութիւնների պաշտպանը, ինչպէս եւ այդ իրաւունքների կորստեան պատասխանատու» (158):

Այդ մտքի շարունակութիւնն է Վարդավառի տօնին 1916 թ. յուլիս 18-ին արտասանած քարոզի հետեւեալ հաստատումը. «Այն օրից, երբ հայը կորցրեց իւր հայրենիքը՝ իւր ոտքի տակի հողը, կանգնեց հայրենիքի գաղափարի արձանը՝ Ս. Էջմիածինը. նա շինուած չէ՛ քարից կամ այլ նիւթից, այլ մեր հայրենասիրական զգացմունքներից ձուլուած. եւ ամեն անգամ, երբ թուլանում են մեր զգացմունքները՝ փոքրանում է նաեւ այդ հաստատութիւնն ի վնաս հայութեան գոյութեան եւ յուրախութիւն «մեր բարեկամների»[4]:

Քարոզիսօսութեան մէջ Զորէքչեանը ցուցաբերում է մարդկային հոգեբանութեան, համաշխարհային պատմութեան, մշակոյթի կարեւորագոյն հանգրուանների լաւատեղեակութիւն, հմտօրէն օգտագործում է դրանց ընձեռած հնարաւորութիւնները՝ իր խօսքն աւելի պատկերաւոր ու ընկալելի դարձնելու մտահոգութեամբ: Իբրեւ օրինակ յիշենք «Ինչպէս աղօթել» քարոզը՝ նուիրուած Մեծ պասի Ջ. կիրակիին, ուր ընդգծելով Եկեղեցու դերը արուեստների զարգացման յարընթացում, զուգահեռաբար յիշում է եւրոպական արժէքներն ու մեր ազգայինը, ի ցոյց է հանում Հայ եկեղեցու դերը ազգային կեանքում, լեզուի եւ մշակոյթի պահպանութեան գործում (մասնաւորապէս տեսնել էջ 67) եւ ցոյց է տալիս երիտասարդ հոգեւորականի լայնախոհ, լուրջ մօտեցումը:

Եղիա մարգարէի կիրակիի քարոզը նուիրուած էր ժողովրդական տօների նշանակութեան բացայայտմանը (1914-ի յունիս) եւ ցոյց է տալիս երիտասարդ հոգեւորականի լայնախոհ, լուրջ մօտեցումը: «Այն՝ ինչ որ մեր ժողովրդի կեանքում դեր է խաղում, պէտք է արծարծուի աւետարանական լուսով»,-պատգամում է նա: («Քարոզգիրք», էջ 102:) «Գիտեմ, թէ ինչպիսի տգեղ ու անցանկալի տեսարաններ են տեղի ունենում այնտեղ, բայց եւ այնպէս՝ հեռու եմ ժողովրդական այդ տօները պախարակելու գաղափարից: Ես սիրում եմ այդ տօները, հաճոյքով նայում եմ այն խմբուած մարդոց վրայ, որոնք վայելել գիտեն աստուածային մեծ պարգեւը՝ կեանքը: Ինձ մի՛ վատաբանէք, ես առաջնորդում եմ Փրկչի օրինակով. Յիսուս

3 1950 թ. «Էջմիածին» ամսագիրը՝ թ. Ե-Ջ, էջ 20-22, տպագրեց Ս. Էջմիածնին նուիրուած սոյն քարոզը՝ փոքրինչ «վերանայուած Վեհափառ Հայրապետի կողմից»:

4 130: Տե՛ս նաեւ «Արարատ», 1916, յուլիս-օգոստոս, էջ 482:

իր հրապարակային գործունէութեան հէնց սկզբում, մասնակցում է հարսանեաց հանդէսին, եւ չի էլ մտածում լրջութեամբ ու մթագնած դէմքով ուրիշների ուրախ տրամադրութիւնը խափանել, այլ ընդհակառակը, ամեն ջանք է դնում, նրանց ուրախ տրամադրութիւնը պահպանելու» (102-103):

Ուրեմն, չի կարելի խէթ նայել ժողովրդական տօներին, որովհետեւ «այն՝ ինչ որ լաւ է ընտանիքի համար, ցանկալի է նաեւ համայնքի համար: Տօները՝ եթէ նրանք լաւ կազմակերպուած են, անգնահատելի են նաեւ համայնական կեանքի համար: Նրանք ընդհատում են մեր ամենօրեայ կեանքի միակերպութիւնը. մի ուրախ ժամ, մի ուրախ օր խիստ պատշաճում է մեր տանջանքներին եւ նեղութիւններին, որ կեանքը անխուսափելիօրէն պատրաստում է մեզ համար. նա ներդաշնակութիւն է մտցնում կեանքի մէջ» (103-104):

Չորէքչեանի քարոզները խորհող եւ հայրենասէր մտաւորականի խօսք են եւ իրենց մէջ արծարծուած մտքերով, գաղափարներով արթնացրել են ունկնդիրների սրտերը, յուզել, մղել աշխատանքի ու պայքարի, սիրելի դարձել ունկնդրին: Եւ զարմանալի չէ, որ տարիներ անց գրաւել են հոգեւոր եղբայրների ուշադրութիւնը, ծագել է դրանց հրատարակութեան անհրաժեշտութիւնը:

Պատգամներից բացի Քարոզգիրքը ունի եւս մի կարեւոր արժանիք. շարադրուած է գրական ակնյայտ ձիրքով, պարզ, դիւրըմբռնելի, յիշուող պատկերներով: Հասկանալի է, այս որակի բանաւոր խօսքն ընդունակ է անհամեմատ խոր ներգործութեան, ազդելու ունկնդրի մտքին ու սրտին: Մէջբերենք «Խաղաղութեան աւետիքն ու արդի կեանքը» Ծննդեան քարոզից մի հատուած՝ եւ ճաշակ տալու համար հեղինակի խօսքարուեստի վերաբերեալ: Ահաւասիկ. «Պատահե՞լ է ձեզ ցուրտ ձմրանը կանգնել պատուհանի առաջ եւ դիտել խաղաղ ու մեռած բնութիւնը. մերկ, տերեւաթափ ծառեր, կոշտ ու սառած երկիր, պաղ օդ, լքեալ ու տխուր թռչներ՝ զրկուած սիրունիկ թռչնիկների անուշ երգերից:

Այդ տեսարանը դիտելիս՝ մեր հոգին ակամայ պատկերացնում է գարնան զեղեցկութիւնը. մենք զգում ենք գարնան զով քամին, որ խաղում է բաց պատուհանի ճերմակ վարագոյրների հետ, մենք տեսնում ենք նորածիլ, քնքոյշ ու կանաչ սաղարթ՝ ծառերի վրայ, մենք լսում ենք զեփիւռի մրմունջը՝ որ բերում է մեզ դաշտի հոտաւէտ ծաղիկների եւ թարմ խոտի անոյշ բոյրը:

Ճիշտ նոյնն է պատահում, երբ մենք յիշում ենք Փրկչի ծնունդը կամ կանգնում հանճարեղ նկարիչների՝ Գորրեջիոյի, Ռէմբրանտի եւ այլոց նրբաշարժ վրձինների ծնունդ՝ Փրկչի Ծնունդը պատկերացնող հրաշագեղ նկարների առաջ» (15): Այդպիսի սկիզբ տե՛ս նաեւ էջ 102, 160 եւն. Հմմտ. «Արարատ», 1917, Ա-Բ, էջ 28-33/:

Ինչպէս առհասարակ Չորէքչեանի բոլոր գործերում, նոյնպէս եւ այստեղ «իրար են լրացնում գիտունն ու կրօնաւորը, արուեստագէտն ու տեսաբանը»[5]: Նրա, ինչպէս ժամանակակիցը կասէր՝ քաջարուեստ քարոզները խորհող եւ հայրենասէր մտաւորականի խօսք են եւ իրենց գրաւիչ ոճով, արծարծած մտքերով, գաղափարներով արթնացրել են ունկնդիրների սրտերը, յուզել, մղել աշխատանքի ու պայքարի, սիրելի դարձել ունկնդրին, եւ զարմանալի չէ, որ տարիներ անց գրաւել են հոգեւոր եղբայրների ուշադրութիւնը, ծագել է դրանց

5 «Երջանկայիշատակ Տ.Տ. Գէորգ Զ. Կաթողիկոս Ամենայն Հայոց», Ս. Էջմիածին, 1955, էջ 100:

հրատարակութեան անհրաժեշտութիւնը: «Էջմիածին» շաբաթաթերթի գրախօս Եզնիկ վարդապետը գիրքը գնահատում է որպէս «շահաւէտ աշխատասիրութիւն»[6], որ լաւագոյն բացայայտում է հեղինակի ճարտասանական ձիրքը: Կարեւոր էր քարոզների ազգային-բարոյական նշանակութիւնը, որի համար պարարտ հող էր Նոր Նախիջեւանի միջավայրն իսկ: Համայնքը լիովին պատրաստ էր ընկալելու հոգեւոր հովուի պատգամներն ու յորդորները, ճիշտ գնահատելու քարոզների արծարծումները:

Բոլոր այս յատկութիւնները տեսանելի էին արդեն Ի. դարասկզբին, երբ Գէորգ վարդապետ Չորէքչեանը սիրով ու նուիրումով ծառայում էր իր համաքաղաքացիներին, արժանանում նրանց գնահատանքին: Շատ ***ավելի ուշ***, արդեն Վեհափառ Հայրապետ Գէորգ Զ. Չորեքչեանի մահուան կապակցութեամբ Մայր Աթոռի Գերագոյն Հոգեւոր Խորհուրդը արձանագրում էր. «Հոգեկան մեծ հոճոյք էր երիտասարդի խանդավառութեամբ եւ կորովով: Նա իր խօսքի մէջ դնում էր իր բազմակողմանի զարգացումը, գիտութիւնը, փորձառութիւնը, մեր ազգային-եկեղեցական կեանքի խորը ճանաչումը, իր անսպառ կեանքը, իր ազնուական եւ սուրբ հոգին»[7]:

Հետագայում արձանագրուելու էր, թէ Վեհափառի գրութիւնները, մասնաւորաբար քարոզները, ուշադրութիւն են գրաւում «քրիստոնէական շնչով, հայ զգայնութեամբ, հայ մտայնութամբ, հայ կենցաղով, լեզուի բարձր կուլտուրայով եւ արուեստի բարձր արժանիքներով: Քիչ խօսքով շատ բան ասելու բացառիկ ոյժը, պարզութիւնը, գունեղութիւնը, իմաստի խորութիւնը, Վեհափառի բեմական արուեստի առանձնայատկութիւններն են: Նրա խօսքում դրսեւորւում է միշտ նրա մեծ մտքի, զգացմունքների հարստութիւնը, խորութիւնը» (33):

Գէորգ վ. Չորէքչեանի Քարոզգիրքը ուսանելի շատ բան ունէր ոչ միայն պարզ հաւատացեալի, այլեւ հոգեւոր հովիւների համար, այսօր եւս թարմ են հնչում եւ գերում են ընթերցողին թէ՛ վսեմ իմաստներով, թէ՛ գեղեցիկ, գրաւիչ խօսքով:

6 «Էջմիածին» շաբաթաթերթ, 1920, թ. 1, էջ 12: «Վաւերագրեր...», Ե., էջ 224:
7 «Երջանկայիշատակ...», էջ 8: